Funded by the European Union

ՏԵՍԱՆՅՈՒԹԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեսանյութի պատրաստումն իրականացվելու է **«COVID-19. քաղաքացիական հասարակության ճկունություն ու կայունություն»** ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նկարագրությունը. Ծրագիրն իրականացնում է Մարդու իրավունքների տուն Երևանը՝ «Հավասար իրավունքներ և անկախ մեդիա» ֆրանսիական ոչ առևտրային կազմակերպության (ERIM, նախկինում՝ ԱՅՐԵՔՍ Եվրոպա) հետ համատեղ՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, անկախ ակտիվիստներին և անկախ լրատվամիջոցներին Արևելյան գործընկերության երկրներում՝ շարունակելու իրենց գործունեությունը COVID-19-ի համաճարակի ընթացքում և դրանից հետո: Ծրագրի տևողությունը 48 ամիս է:

Ծրագրի շահառուները. Ծրագրի իրականացման նախորդ 2 տարիների ընթացքում ֆինանսավորվել են 27 քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) ու անկախ լրատվամիջոցների 29 ծրագրեր ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Ծրագրի շրջանակներում, մասնավորապես, տրամադրվել են ինստիտուցիոնալ աջակցության արագ արձագանքման ու հոգեբանական աջակցության դրամաշնորհներ, դրամաշնորհներ՝ ուղղված ՔՀԿ-ների թվայնացմանն ու կարողությունների զարգացմանը: Բացի այդ՝ դրամաշնորհներ են հատկացվել մեդիա արշավների իրականացման համար՝ COVID-19-ի համաճարակի դեմ պատվաստումների խթանման, ինչպես նաև ապատեղեկատվության դեմ պայքարի նպատակով:

Տեսանյութի նպատակը. Տեսանյութը պետք է ամփոփի Ծրագրի իրականացման նախորդ 2 տարիները՝ ցույց տալով Ծրագրի շրջանակներում իրականացված ծրագրերի և դրանց շահառու խմբերի բազմազանությունը, ինչպես նաև արտացոլի մինչ օրս արձանագրված հաջողությունները: Տեսանյութը պետք է ուղղված լինի COVID-19-ի համաճարակից տուժած ՔՀԿ-ներին և անկախ լրատվամիջոցներին տրամադրված օգնության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը՝ բարձրացնելով դրանց տեսանելիությունը և ստեղծելով դրական կերպար: Բացի այդ՝ տեսանյութը պետք է առաջխաղացնի ծրագիրը և լուսաբանի ՄԻՏ Երևանի գործունեությունը:

Տեսանյութի թիրախը. Տեսանյութի թիրախը Ծրագրի գործընկեր կազմակերպություններն են տարբեր երկրներում (Ֆրանսիա, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան և Բելառուս), Հայաստանում ԵՄ պատվիրակությունը, ՄԻՏ Երևանի անդամ և գործընկեր կազմակերպությունները, ինչպես նաև ՄԻՏ Երևանի լսարանը տարբեր սոցիալական հարթակներում:

Տեսանյութի տևողությունը. 6-8 րոպե

Լուսաբանման շրջանակը. շահառու կազմակերպությունների 5-6 ներկայացուցիչներ

Տեսանյութի պատրաստման վայրը.Երևան և մարզեր (կիստակեցվի)

Տեսանյութի պատրաստմանը ներկայացվող պահանջներ. Պահանջվում է պատրաստել 6-8 րոպե տևողությամբ մեկ տեսանյութ՝ ներկայացնելով նվազագույնը 5 և առավելագույնը 7 շահառուների Երևանից և մարզերից (կիստակեցվի): Տեսանյութը պետք է լինի հայերեն և ունենա անգլերեն ենթագրեր: Տեսանյութի օգնությամբ հանրությունը պետք է տեղեկանա ՄԻՏ Երևանի կողմից ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի վերջին 2 տարիների ընթացքում ձեռք բերված դրական արդյունքների մասին՝ չնայած COVID-19-ի համաճարակի ունեցած վնասակար ազդեցությանը:

Դիմելու կարգը. Տեսանյութի պատրաստման համար կարող են դիմել նմանատիպ տեսանյութերի պատրաստմամբ զբաղվող անհատ մասնագետներ և կազմակերպություններ՝ ներկայացնելով

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու են «Հավասար իրավունքներ և անկախ մերդիա» ֆրանսիական կազմակերպությունն ու Մարդու իրավունքների տուն Երևանը, և այն կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:

Funded by the European Union

համապատասխան գնային առաջարկ՝ նշելով տեսանյութի պատրաստման գինը ՀՀ դրամով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ դեպի մարզեր ուղեվորվելու ծախսերը պետք է ներառված լինեն գնային առաջարկի մեջ (ընդհանուր 3-4 մարզեր): Դիմումի հետ միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ամփոփ տեղեկատվություն արդեն իսկ պատրաստված տեսանյութերի վերաբերյալ՝ տալով դրանց հղումը, հղման բացակայության դեպքում՝ կցել համապատասխան տեսանյութը (3-5 տեսանյութ):

Գնային առաջարկներն ու պահանջվող տեղեկատվությունն անհրաժեշտ է ուղարկել մինչև 2022 թ. հոկտեմբերի 7-ը՝ info@hrhyerevan.org էլ. փոստային հասցեին: Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք գրել նշված էլ. փոստային հասցեին:

Ծանոթագրություն. *Մարդու իրավունքների տուն Երևանը ստեղծվել է 2012 թվականին: Այսօր ՄԻՏ Երևանն իր հարկի տակ միավորում է 7 կազմակերպություն: ՄԻՏ Երևանի նպատակն է լինել անվտանգ, մատչելի և ընդհանուր տարածք ակտիվիստների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, շարժումների, քաղաքացիական նախաձեռնությունների և իրավապաշտպանների համար, որոնք հաճախ թրախավորվում են իրենց կատարած աշխատանքի համար: ՄԻՏ Երևանի մասին լրացուցիչ տեղեկություն կարող եք ստանալ կազմակերպության կայքէջից. https://hrhyerevan.org/:*

Մարդու իրավունքների տուն Երևան

23.09.2022, Երևան

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու են «Հավասար իրավունքներ և անկախ մերդիա» ֆրանսիական կազմակերպությունն ու Մարդու իրավունքների տուն Երևանը, և այն կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը: